Եվրոպայի խորհրդին անդամակցելուց ի վեր Հայաստանը ակտիվ քայլեր է ձեռնարկել անդամակցության պարտավորությունները կատարել ուուղղությամբ: Վավերացվել են բոլոր անհրաժեշտ կոնվենցիաները՝ արդյունքում ստորագրված և վավերացված կոնվենցիաների ընդհանուր թիվը հասել է 71-ի, իսկ մասնակի համաձայնագրերինը՝ 12-ի: Այս թիվը շարունակում է աճել: Նախարարների կոմիտեում 2013 թվականի մայիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում Հայաստանի նախագահությունը կարևոր հնարավորություն է ընձեռել Եվրոպայի խորհրդի դերը խթանելու, կոնվենցիոն համակարգն ամրապնդելու և Դատարանի որոշումների կատարմանն աջակցելու համար:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ ԵՎ ԽԱՐՏԻԱՆԵՐ

Մարդու իրավունքներ

2001

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ստորագրումը և 2002 թվականին՝ վավերացումը

ՀՀ քաղաքացիները և Հայաստանի իրավազորության ներքո գտնվող անձինք իրավունք են ստանում դիմելու Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

2003

Մահապատժի վերացումը

2023

Մահապատժի վերացումը բոլոր հանգամանքներում

Հայաստանը մահապատժի վերացումը ճանաչում է որպես կյանքի իրավունքի երաշխավորման կարևորագույն գործոն:

2001

Անդամակցություն Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեին

ՀՀ քաղաքացիները պաշտպանված են խոշտանգումներից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից:

2001

Քրգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի վավերացում

2002

Անդամակցություն Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային

Քաղաքացիներն օգտվում են մշակութային ինքնության, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների պահպանման և օգտագործման աջակցության ավելի ուժեղ երաշխիքներից:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

2002

Ժողովրդավարական կառավարում

Նդամակցություն Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիային

ՀՀ քաղաքացիներին երաշխավորվում է տեղական ինքնակառավարման գործերին մասնակցելու իրավունքը:

2004

Սոցիալական իրավունքներ

Նդամակցություն Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային՝ ընդունելով վերանայված խարտիայի 98 կետերից 67-ը

Քաղաքացիներն օգտվում են ամրապնդված սոցիալական և տնտեսական իրավունքներից, բարելավված աշխատանքային պաշտպանությունից, սոցիալական ապահովության երաշխիքներից և խոցելի խմբերի իրավունքների պաշտպանություններից:

2005

Կրթություն

Վրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին կոնվենցիայի վավերացում

Քաղաքացիներն օգտվում են Եվրոպայում Հայաստանի բարձրագույն կրթության դիպլոմների արդար և թափանցիկ ճանաչումից՝ ընդլայնելով ուսման, աշխատանքի և արտասահմանում շարժունակության հնարավորությունները:

2008

Մարդկանց թրաֆիքինգ

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիայի վավերացում և հետագայում՝ 2018 թվականին Եվրոպայի խորհրդի մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիայի ստորագրում

Քաղաքացիներն օգտվում են շահագործման և թրաֆիքինգի դեմ պաշտպանության ուժեղացված միջոցներից:

2012

Անձնական տվյալների պաշտպանություն

Նձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիայի վավերացում

ՀՀ քաղաքացիներն օգտվում են իրենց անձնական տվյալների, գաղտնիության իրավունքների և ավտոմատացված տեղեկատվության մշակման չարաշահման դեմ պաշտպանության ավելի ուժեղ միջոցներից:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

2005 – 2006

Հակակոռուպցիոն և հակաահաբեկչական գործունեություն

Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի և Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի վավերացում

2008

Ականավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայի վավերացում

ՀՀ պաշտոնյաները հաշվետու են, ապօրինի ճեռք բերված ակտիվները վերականգնվում են, կոռուպցիան պատժելի է, և քաղաքացիները օգտվում են իրենց իրավունքները պաշտպանելու իրավական գործիքներից:

2016

Ահաբեկչության կանխարգելման մասին կոնվենցիայի վավերացում

Հակաահաբեկչական միջոցառումները օրինական են և համաչափ՝ միտված քաղաքացիների պաշտպանությանը:

2018

Հավասարություն և մարդկային արժանապատվություն

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի ստորագրում

2020

Երեխաների սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանության մասին կոնվենցիայի (Լանզարոտեի կոնվենցիա) վավերացում

ՀՀ քաղաքացիներն օգտվում են երեխաների և կանանց ավելի լավ պաշտպանությունից՝ բարելավված հաշվետվողականության համակարգերի միջոցով:

2016

Մարդու իրավունքները կենսաբժշկության ոլորտում

Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին կոնվենցիայի վավերացում

2025

Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիայի՝ Օվիեդոյի կոնվենցիայի վավերացում

Քաղաքացիներն օգտվում են ավելի անվտանգ բժշկական արտադրանքի, բժշկական խարդախությունից պաշտպանության և կենսաբանության ու բժշկության ոլորտում մարդու իրավունքների և արժանապատվության եվրոպական ստանդարտներին համապատասխանեցված երաշխիքներից:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2004

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ստեղծում

ՀՀ քաղաքացիներն օգտվում են մարդու իրավունքների ավելի հասանելի պաշտպանությունից, հատկապես խոցելի խմբերի համար:

2008

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի շրջանակներում Կանխարգելման ազգային մեխանիզմի ստեղծում

ՀՀ իրավապահ և քրեակատարողական համակարգերն ավելի թափանցիկ և հաշվետու են:

2005 – 2015

Սահմանադրական խոշոր բարեփոխումներ

Լավարկվում են ընտրական, դատական և այլ ոլորտային օրենսգրքերը և օրենքները՝ կարևոր օրենսդրական փոփոխությունների արդյունքում:

2015 – 2025

Տարածքային և վարչական բարեփոխումներ Հայաստանում (TARA)

975 համայնքների խոշորացվել են 70-ի. ՀՀ քաղաքացիներն ունեն ավելի մեծ մասնակցություն տեղական ինքնակառավարման հարցերին. օգտվում են ավելի արդյունավետ և հաշվետու հանրային ծառայություններից և բարելավված տեղական ինքնակառավարման համակարգերից:

2016

Պրոբացիայի մասին օրենքի ընդունում. իսկ 2023 թվականին՝ Պրոբացիայի ծառայության մասին օրենքի ընդունում

Քաղաքացիներն օգտվում են ավելի մարդասիրական, վերականգնողական և համայնքային ուղղվածություն ունեցող արդարադատության համակարգից:

2021

Նոր Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերի ընդունում. իսկ 2022 թվականին՝ Քրեական օրենսգրքի փոփոխությունների ընդունում

ՀՀ **քաղաքացիներն** օգտվում են այնպիսի արդարադատության համակարգից, որը քիչ է պատժում, ավելի շատ է ուղղում, ավելի լավ է պաշտպանում իրավունքները:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

2024

Ընտանեկան և ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան ու ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության մասին օրենքում փոփոխության ընդունում

ՀՀ քաղաքացիներն օգտվում են գենդերային և ընտանեկան բռնության դեմ ավելի ուժեղ պաշտպանությունից, զոհերին ուղղված աջակցությունից, ինչպես նաև հավասարության և կանխարգելման խթանմանն ուղղված միջոցներից:

2024

Հանրային առողջապահության մասին օրենքի ընդունում

ՀՀ հանրային առողջապահության համակարգը համապատասխանեցվում է եվրոպական չափանիշներին՝ ապահովելով քաղաքացիների համար ավելի լավ հասանելիություն:

2023

Արդարադատության նախարարության կազմում գործող քրեակատարողական բժշկություն կենտրոնի տեղափոխումը Առողջապահության նախարարության կազմ

Երաշխավորվում են քրեակատարողական հիմնարկներում համապարփակ, բարձրորակ առողջապահական ծառայությունները և բժշկական անձնակազմի մասնագիտական անկախությունը:

2024

Տեսաբժշկությունը կապում է բանտային բժշկական ստորաբաժանումները քաղաքացիական հիվանդանոցների հետ

Հաշվետվողականությունը և վատ վերաբերմունքի կանխարգելումը ամրապնդվում են նոր հաշվետվողականության մեխանիզմների միջոցով:

2024

Կատարողական վարույթների մասին օրենքի ընդունում

Քաղաքացիներն օգտվում են նոր օրենքների ճիշտ կիրառումից, որոնք նպաստում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի դեմ կայացված վճիռների կատարմանը՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 11-րդ և 13-րդ հոդվածների:

2024

Ստիկանության գվարդիայի մասին օրենքի ընդունումը

Քաղաքացիներն օգտվում են խաղաղ հավաքների և արտակարգ իրավիճակների ժամանակ ավելի ուժեղ և արագ պաշտպանությունից՝ ոստիկանության կողմից ուժի կիրառման ավելի հստակ կանոնների, հաշվետվողականության և սահմանափակումների միջոցով:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

2024

2023 թվականի փախստականների հոսքին ազգային արձագանք՝ Եվրոպայի խորհրդի կողմից աջակցվող փախստականների հոսքին արձագանքման փաթեթի միջոցով:

Փախստականներն օգտվում են միգրացիայի կառավարման, ապաստան ստանալու ընթացակարգերի և մարդու իրավունքների պաշտպանության բարելավված մեխանիզմներից:

2025

2025 – 2028 թվականների գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարության ընդունում

Սեռական բռնությունից պաշտպանությունը, կանանց մասնակցությունը ղեկավարության և որոշումների կայացման գործընթացներին ամրապնդվում են՝ նպաստելով ավելի ներառական, ժողովրդավարական հասարակության կառուցմանը:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Նշումների համար

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Նշումների համար

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE